05.10.2024

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգարժան ուսուցիչներ

Կրթության բնագավառի ներկայացուցիչներ,

Ակնածանքով և երախտագիտության մեծ զգացումով շնորհավորում եմ Ձեզ՝ մասնագիտական տոնի՝ Ուսուցչի օրվա առթիվ:

Այս գեղեցիկ տոնը յուրաքանչյուրինս է, քանի որ բոլոր ճանապարհներն անցնում են դպրոցով, դպրոցն է մեր սկիզբը:

Ինչքան էլ հարափոփոխ լինի կյանքը, զարգանան տեխնոլոգիաները, միևնույն է, դպրոցի այուները եղել և մնում են ուսուցիչները, որոնց դերը դպրոցապահպան գործում առաջնահերթ է և որոշիչ:

Անկախ ժամանակներից ու տարիքից՝ յուրաքանչյուրն իր հոգու մի անկյունում պահում է ուսումնառության տարիների թանկ հիշողությունները, որոնք ամբողջանում են իրենց ուսուցիչների սերմանած դասերով ու կերպարով:

Անշուշտ, ուսուցչի աշխատանքի լավագույն գնահատականը տալիս են սաները, որոնք իրենց գիտելիքներով և իմացությամբ քննություն են բռնում կյանքում:

Ամենակարևոր դասն էլ, որ մեր մանկավարժները տվել ու տալիս են իրենց սաներին, հայրենապաշտության և հայրենասիրության դասերն են, որոնք մեր մեջ կրում և որոնցով առաջնորդվում ենք ողջ կյանքի ընթացքում:

Ակնհայտ է, որ այս բարդ, չափազանց պատասխանատու ժամանակաշրջանում ուսուցիչների աշխատանքն առավել քան կարևոր է և որոշիչ: Կրթական ոլորտի բարեփոխումներն էլ կյանքի են կոչվում և դառնում իրողություն հենց նվիրյալ ուսուցիչների պատվախնդիր ու ջանադիր աշխատանքի շնորհիվ:

Այս տոնական պահին առանձնակի սիրով ցանկանում եմ շնորհավորել մեր ավագ սերնդի մանկավարժներին, նրանց, որոնք տասնամյակներ շարունակ կրթում են սերունդներ, նրանց, որոնք այս օր էլ շարունակում են իրենց աշխատանքը՝ օրինակ դառնալով կրտսեր գործընկերների համար, նրանց, որոնք անցել են վաստակած հանգստի, սակայն իրենց թողած ձեռագրով և կենսափորձով լավագույն օրինակ են երիտասարդների համար:

Եվս մեկ անգամ փաստենք, որ դպրոցին շունչ ու ոգի տվողն ուսուցիչներն են, դպրոց պահպանողն ու ապրեցնողները՝ կրթության նվիրյալները:

Հարգարժան ուսուցիչներ

Դուք ոչ միայն շարունակում եք մանկավարժական մեծ համայնքի լավագույն ավանդույթները, այլ նաև աշխատում եք ժամանակի պահանջներին համահունչ, ձեր ազգանվեր առաքելությանը հավատարիմ:

Շնորհավորանքի խոսքերս եմ հղում համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատությունների դաստիարակներին և մանկավարժներին:

Մանկակրթման և դաստիարակման, հայապահպանման ու հայրենասիրության սերմանման բարդ ու պատվաբեր գործի ակունքներում եք դուք և ձեր կոչմանն հավատարիմ՝ ապահովում եք մեր երեխաների նախադպրոցական կրթությունն ու դաստիարակությունը:

Ուսուցչի օրվա առթիվ շնորհավորում եմ Սևանի բազմագործառութային քոլեջի դասախոսներին, մանկավարժներին, որոնք կոչված են իրականացնելու շատ կարևոր առաքելություն:

Շնորհավորանքներս եմ հղում արտադպրոցական հաստատությունների խմբավարներին և դասատուներին, որոնք իրենց կարևոր և պատասխանատու աշխատանքի շնորհիվ ձևավորում են վաղվա քաղաքացուն:

Հարգարժան ուսուցիչներ

Բարդ ու հարափոփոխ, մարտահրավերնորվ լի այս ժամանակահատվածում, երբ վերաձևակերպվում են շատ արժեքներ, ցանկանում եմ, որ դուք ձեր ներկայությամբ ու աշխատանքով դառնաք մեր արժեքների մեծագույն պահապանը՝ կրթությունը դարձնելով բացարձակ արժեք:

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների և համայնքի ավագանու անունից ևս մեկ անգամ շնորհավորում եմ այս գեղեցիկ տոնի առթիվ: Մաղթում եմ ուժ և եռանդ, առողջություն, երկարակեցություն, բարեկեցություն և լավատեսություն, խաղաղ ու անվտանգ պայմաններում ապրելու, աշխատելու հնարավորություն, ժամանակի փորձությունները դիմակայելու մեծ կամք:

Շնորհավոր տոնդ, Ուսուցիչ

Շնորհակալություն Քո առաքելության, անմնացորդ նվիրումի և դպրոցապահպան գործունեության համար: